'ի Կոստանդինուպոլսոյ և բաժանել նոցա · զի եթէ արատ ինչ տեսանէին 'ի նոսա, դարձուցանէին յետս և խնդրէին զկրկնապատիկ դին նոցին · իսկ յորժամ փակեցան ծովային ճանապարհք յերեսաց պատերազմաց եւ խռովութեանց ժամանակին՝ և դադարեցան նաւք ուխտաւորաց, փոխանակ ընծայից առնուին դրամս, և 'ի բանալ ճանապարհաց վերստին դարձան յառաջին սովորութիւնս, և Պօղոս արդել զայս հրամանաւ Արքային, և ժամանակ ինչ 'ի տեղի ընծայից որ խափանեալ էր՝ ետ դրամս, և ապա սակաւ առ սակաւ նուազեցաւ և այն, այլ ոչ խսպառ բարձեալ անհետ եղեւ։

Յաւուրց անտի Պատրիարքութեան Թէոդորոսի երեւելի հանդիսանայր յարաբերութեամբ իւրով ընդ վանականս Զմիւռնացի Պ · Մուրատ Յարութիւնեան 'ի բնակչաց քաղաքին Երուսաղէմի · իսկ յետ մահուան Թէոդորոսի առաւել մտերմանայ ընդ Խորհրդականս Սրբոյ Աթոռոյն և 'ի հարկաւորեալ դէպս իւրովք խորհրդովք ձեռնտու և օգնական լինի յամենայն կարեւոր գործս վանաց · մանաւանդ չնորհիւ հայրենակցին իւրոյ Պօղոս Պէյի Եուսուֆեան՝ հասանելով 'ի պաշտօն Հիւպատոսութեան Սարտինեայ և Նաբոլիթանի՝ և եւս ճոխացաւ ազդեցութեամբ և պատուով։

Պօղոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, ըստ բնատուր չնորհաց իւրոց՝ դիտաց զբարեպաշտ ազգասիրութիւն Պ · Մուրատայ յօգուտ Ս · Աթոռոյն 'ի կիր առնուլ և 'ի կենդանութեանն յաւերժական յիշատակօք եւ կտակաւ պանծալիս կացուցանել զանուն նորին։ Այսոքիկ են կըտակաւ ուանդեալքն 'ի Պ · Մուրատայ Սուրբ Աթոռոյս, 1°.—Տուն մի 'ի շրջապատս փոքրիկ դետնով, 'ի գիւղն Բեթղեհէմի · 2°.—Մեծ պարտէզ մի արտաքոյ քաղաքին Յոպպէի դեղեցկակերտ տամբք, ջրհորովք, տնկովք եւ ընդարձակ դետնով (*) · 3°.—Արտաքոյ քաղաքին Յոպպէի դերեզմանատունն Հայոց, նոյնպէս ընդարձակ պարտիզեաւ

(*) Այս պարտէզ սակս արդիւնաւորելոյ · Զմիւռնացի Տ · Յովհաննէս Պատրիարք Իոպէիպովի օրինաց փոխանակեաց Յերուսաղէմ տանց և կրպակաց։